ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. **N____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.06.2009թ. հ.2269090 վկայական) Երևանի Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող 221.8քմ մակերեսով ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի նոյեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող 221.8քմ մակերեսով ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2030 թվականի նոյեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Սայաթ-Նովա պողոտայի հ.21ա շենքի հ.50 հասցեում գտնվող գույքը (0.026532հա հողամաս, 221.8քմ շինություն) անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 05.06.2009թ. հ.2269090 վկայականի համաձայն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«ՊՈՐՏԱԼ ԷՐԳՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ» բարեգործական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2020 թվականին՝ աջակցելու աուտիզմ ունեցող երեխաներին, դեռահասներին և նրանց ընտանիքներին: Կենտրոնի հիմնադիրները հանդիսանում են էրգոթերապիայի հայկական ասոցիացիայի հիմնադիրներ և անդամներ: Կենտրոնը սերտ համագործակցում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ՝ ծառայելով գործնական բազա համալսարանում կրթվող հատուկ և ներառական ոլորտի մի շարք մասնագետների համար:

Կենտրոնը իր առօրյա գործունեության մեջ աջակցում է աուտիստիկ սպեկտրի խանգարում ունեցող երեխաներին, դեռահասներին և նրանց ընտանիքի անդամներին՝ բարելավելով կյանքի որակը՝ զարգացնելով դրա համար անհրաժեշտ հմտությունները, ինչպես նաև հոգալով նրանց կրթական և սոցիալական կարիքները: Կենտրոնը հիմնադրման առաջին իսկ օրվանից մատուցում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային ծառայություններ: Խմբային ծառայությունները իրենց հերթին ենթադրում են երկարօրյա ծառայություններ, որոնք ապահովում են այցելուների համար լիարժեք խնամք: Կենտրոնում աշխատանք է իրականացվում տարբեր խմբերի երեխաների հետ, հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի կարիքն ու առանձնահատկությունները: Կենտրոնը իրականացնում է աուտիզմ ունեցող երեխաների և դեռահասների համար համայնքային նշանակություն ունեցող կրթական և սոցիալ-մշակութային ծրագրեր, որոնք ուղղված են այս երեխաների և դեռահասների զարգացմանը և ներառմանը:

Ելնելով վերը շարադրվածից և կենտրոնի անխափան գործունեությունը իրականացնելու համար աշխատանքային տարածք ունենալու անհրաժեշտությունից, ինչպես նաև ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և

օտարման 2025 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ